

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

**ՀՀ ԷԵԲՊՆ ՋՏՊԿ «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՊՁԲ-Ջ-18
ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով շինանյութի ձեռքբերման
գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի**

ք. Երևան

15 նոյեմբերի 2017 թ.
Ժամը. 15:45

Մասնակցում էին.

- Հանձնաժողովի նախագահ՝ **Ա. Թադևոսյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)
- Անդամներ՝ **Ա. Ջալադյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)
Մ. Մելքոնյան (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)
Ն. Համբարձումյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)
Բ. Եղիզարյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)
- Հանձնաժողովի քարտուղար **Ն. Նիկողայան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՎ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Հայտերի բացման մասին

«ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՊՁԲ-Ջ-18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով շինանյութերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 2017 թվականի նոյեմբերի 15-ին ժամը 15:45-ին ք. Երևան Վարդանանց փակուղի 8, 6-րդ հարկ հասցեում:

Գնահատող հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց շինանյութի գնման նախահաշվային գինը մեկ թվով արտահայտված՝

Զ/Հ	Գնման առարկայի անվանումը	Նախահաշվային գինը (ՀՀ դրամ)
1	Սալիկ, կերամիկական, հատակի համար	275000

1.1. Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումները

«ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՊՁԲ-Ջ-18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հ/Հ	Մասնակիցների անվանումը	Գտնվելու վայրը
1	ԱՁ «Վահագն Արգարի Խաչատրյան»	ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ծակքար, 1-ին փ. տուն 10
2	«Բեսթ Գրուպ» ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Սևանի փ. 86/3
3	ԱՁ «Դավիթ Պետրոսյան»	ՀՀ Արարատի մարզ, գ. Ոստան, Արարատյան 80

1.2 Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:

Մասնակիցների կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ընդունվել է կողմ-5 դեմ-0

1.3 Տվյալներ մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:

Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց մասնակիցների ներկայացրած փաստաթղթերը և «Բեսթ Գրուպ» ՍՊ ընկերության, ԱԶ «Դավիթ Պետրոսյան»-ի կողմից ներկայացված փաստաթղթերում անհամապատասխանություններ չհայտնաբերեց: ԱԶ «Վահագն Աբգարի Խաչատրյան»-ի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ մասնակցության հայտի ապահովման տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացված մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը, որում բացակայում էր թվային էլեկտրոնային ստորագրությունը:

Ընդունվել է կողմ-5 դեմ-0

1.4 Մասնակցի առաջարկած գինը

(<< դրամ)

Չ/Հ	Մասնակիցների անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	Ընդհանուր գին, ներառյալ ԱԱՀ
1	ԱԶ «Վահագն Աբգարի Խաչատրյան»	270000	270000
2	«Բեսթ Գրուպ» ՍՊԸ	179850	215820
3	ԱԶ «Դավիթ Պետրոսյան»	330000	330000

1.5 Հայտերի գնահատման մասին:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

«Բեսթ Գրուպ» ընկերության և ԱԶ «Դավիթ Պետրոսյան»-ի հայտերը գնահատել բավարար, իսկ ԱԶ «Վահագն Աբգարի Խաչատրյան»-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, քանի որ հայտի ապահովման տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացված մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը չի կազմվել հրավերի պահանջներին համապատասխան և տվյալ փաստաթուղթը ենթակա չէ շտկման:

Գնահատումն իրականացվել է հրավերով սահմանված կարգով՝ www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով:

Ընդունվել է կողմ-5 դեմ-0

1.6 Բանակցությունների վարման մասին:

Մասնակիցների հետ բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է կողմ-5 դեմ-0

1.7 Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Բեսթ Գրուպ» ՍՊԸ

2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել ԱԶ «Դավիթ Պետրոսյան»-ին

Ընդունվել է կողմ-5 դեմ-0

1.8 «ՀՀԷԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՊՁԲ-Զ-18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:

Գնման ընթացակարգի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է կողմ-5 դեմ-0

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Բեսթ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) կողմից մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության հարցման վերաբերյալ եզրակացության ստացման օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:00-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա 6-րդ հարկ, խորհրդակցությունների սրահ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝




Ա. Թադևոսյան


Անդամներ՝



Ա. Զալադյան




Մ. Մելքոնյան



Ն. Համբարձումյան

Հանձնաժողովի քարտուղար



Բ. Եղիգարյան

Ն. Նիկոլայան